

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Միաբանության
Ընդհանուր Ժողովը

Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Միաբանությունը, որուն գլխաւոր առաքելութեան մաս կը կազմէ Սուրբ Երկրի մէջ սրբատեղեաց պահպանումն ու պայծառացումը, ինչպէս նաեւ նոր սերունդներու հոգեւոր եւ կրթական դաստիարակութիւնը, հայ ազգային եւ մշակութային ժառանգութեանց տարածումը, գումարեց իր Միաբանական Ընդհանուր Ժողովը Նոյեմբեր 10-12 օրերուն, նախագահութեամբ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր՝ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի:

Դիւանական գործողութիւններէ ետք, ներկայ գտնուող 33 միաբաններ կատարեցին Լուսարարապետի ընտրութիւնը: Քուէներու քացարձակ մեծամասնութեամբ, Լուսարարապետ ընտրուեցաւ Հիւսթընի (Թեքսաս) Սուրբ Գեորգ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Նուրհան Մ. Վրդ. Մանուկեան: Հայր Նուրհան Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտին երկարամեայ անդամ եղած է, շրջանաւարտ՝ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի, ձեռնադրուած արեղայ 1971ին, եւ վարած է այլեւայլ կարեւոր պաշտօններ Սուրբ Աթոռէն ներս: Ապա անցած արտասահման ուսանելու նպատակով: Ծառայած է այլեւայլ բեմերու մէջ, թէ՛ Եւրոպա եւ թէ՛ Ամերիկա որպէս հոգեւոր հովիւ: Հայր Նուրհան միաբանութեան միջին սերունդի ներկայացուցիչներէն է:

Միաբանական Ընդհանուր Ժողովը ընտրեց նաեւ Տնօրէն Ժողովի դադարեալ մէկ անդամի փոխարէն Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեանը: Արիս Սրբազան, որ երկար տարիներ վարած է հովուական եւ վարչական պաշտօններ հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերէն ներս, վեց ամիսներէ ի վեր Սուրբ Աթոռ վերադարձած է:

Ժողովի ընթացքին ներկայացուեցան պաշտօնական գրաւոր տեղեկագրեր Պատրիարքութեան միամեայ նիւթական եւ բարոյական գործունէութեան մասին: Միաբաններ առիթ ունեցան մօտէն ծանօթանալու Վանական զանազան հարցերու հետ եւ մանաւանդ տեղեկանալու կալուածներու ներկայ կացութեան մասին:

Ժողովականները գոհունակութեամբ իմացան, թէ խնդրոյ առարկայ դարձած կալուածները կարելի եղած է իրաւական գետնի վրայ հաստատուն պայմաններով ապահովել:

Տեղեկութիւններ տրուեցան Հայոց Քրիստոնէութեան պետականացման 1700 ամեակի առիթով դէպի Երուսաղեմ եւ Հայաստան ծրագրուած Ուխտագնացութեան մասին, եւ երկարօրէն խօսուեցաւ Քրիստոսի Ծննդեան 2000 ամեակի հետ կապուած տօնակատարութեանց եւ Հայոց մասնակցութեան մասին:

Միաբանական Ժողովը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսին, առաքեց քարի մաղթանքներ ցանկանալով «կատարեալ առողջութիւն եւ շուտափոյթ ապաքինում»:

Միաբանական Ժողովը իր շնորհակալութիւնը յայտնեց Պատրիարքարանի հաշուապահութեան եւ կալուածոց Մատակարարման Մարմնի կողմէ տրուած տեղեկութեանց համար, նաեւ Միաբանական Ժողովի Դիւանին կանոնական Ժողովավարութեան համար:

Աշխարհի զանազան կողմերէն Երուսաղեմ եկած միաբան հայրեր ունեցան անգամ մը եւս առիթը վերադառնալու իրենց տունը եւ վերանորոգելու իրենց եղբայրական կապը վանարձակ միաբաններուն հետ:

Դիւան Սուրբ Աթոռոյ